ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2024 թվականի N 110-Ա

ԱԼԼԻԿ ԱՎԹԱՆԴԻԼԻ ԱՂԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի բ) ենթակետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 31-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023CKUYXZ), հողամասի սեփականատեր Ալլիկ Ավթանդիլի Աղայանի 2024 թվականի հունվարի 4-ի N 30 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Ղ. Աղայան փողոցի 1-ին փակուղի 18 հասցեում գտնվող Ալլիկ Ավթանդիլի Աղայանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0141-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 10,0 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԳԵՈԳԼՈԲԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր պարսպի համար կազմում է 1389,6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 13 896 (տասներեք հազար ութ հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 23
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2024 թվականի N 111-Ա

ԱՂԱՎՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Մարտի 8-ի փողոց տուն 14/1 հասցեի բնակիչ Աղավնիկ Վարդգեսի Հովհաննիսյանի (ծնված՝ 1968 թվականի սեպտեմբերի 27-ին, անձնագիր AS0486660, տրված՝ 2019 թվականի հունվարի 15-ին 057-ի կողմից) 2024 թվականի հունվարի 24-ի թիվ 419 դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» 2024 թվականի փետրվարի 14-ի նիստի թիվ 05 արձանագրությունը. Որոշում եմ՝

1. Աղավնիկ Վարդգեսի Հովհաննիսյանին (ծնված՝ 1968 թվականի սեպտեմբերի 27-ին, անձնագիր AS0486660, տրված՝ 2019 թվականի հունվարի 15-ին 057-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Փարաքար համայնք, գյուղ Փարաքար Մարտի 8-ի փողոց տուն 14/1 հասցեում) նշանակել խնամակալ՝ ԱՐԴ1/0354/02/23 քաղաքացիական գործով 2023 թվականի սեպտեմբերի 4-ի վճռով անգործունակ ճանաչված Վարդան Սաշաի Հովհաննիսյանի (ծնված՝ 1965 թվականի մարտի 28-ին, անձնագիր՝ AG0294196, տրված՝ 2004 թվականի ապրիլի 30-ին 057-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Փարաքար համայնք, գյուղ Փարաքար Մարտի 8-ի փողոց տուն 14/1 հասցեում) նկատմամբ:
2. Աղավնիկ Վարդգեսի Հովհաննիսյանին վերապահել իրավունք ի շահ խնամարկյալի, առանց հատուկ լիազորության հանդես գալ իր խնամարկյալի իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:
3. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարին կամ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ՀՀ Վարչական դատարան:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 23
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 112-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-3-րդ ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Կարապետ Ալեքսանի Գյուլնազարյանի 2024 թվականի փետրվարի 7-ի N 757 դիմումը, Փարաքար գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի փետրվարի 2-ի թիվ 1 որոշման թիվ 21 քաղվածքը, տրված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից, 2023 թվականի օգոստոսի 31-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում 7712-ով), 2023 թվականի օգոստոսի 31-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում 7713-ով), «Ջիվան Արսենի Հարությունյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2024 թվականի հունվարի 8-ին տրված հողամասի և շինության հատակագիծը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող կառույցներն իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կատուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական,

պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում. ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Կարապետ Ալեքսանի Գյուլնազարյանի (ծնված՝ 1954 թվականի ապրիլի 4-ին), Աղունիկ Ցոլակի Փիրոյանի (ծնված՝ 1960 թվականի մարտի 28-ին), Կարինե Կարապետի Գյուլնազարյանի (ծնված՝ 1979 թվականի մարտի 8-ին), Ալեքսան Կարապետի Գյուլնազարյանի (ծնված՝ 1981 թվականի հուլիսի 25-ին), սեփականության իրավունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող գույքային միավորի՝ 1994 թվականին կառուցված բնակելի տան, 1994 թվականին կառուցված ծածկի, 1996 թվականին կառուցված բնակելի տան, 1996 թվականին կառուցված բաց պատշգամբի, 1994 թվականին կառուցված զուգարանի, 1994 թվականին կառուցված պարսպի և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ 04-094-0063-0018 կադաստրային ծածկագրով՝ 0.0995 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ՝ համաձայն «Ջիվան Արսենի Հարությունյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հատակագծի: 04-094-0063-0018 կադաստրային ծածկագրով հողամասում 2016 թվականին կառուցված 47.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 2016 թվականին կառուցված 9.3 առակուսի մետր արտաքին մակերեսով ծածկը, 2012 թվականին կառուցված 16.1 քառակուսի մետր մակերեսով ջերմոցը, 2015 թվականին կառուցված 410.3 քառակուսի մետր մակերեսով ջերմոցը թողնել ինքնակամ:

2. Հողատարածքին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց, 2-րդ նրբանցք, 10 բնակելի տուն:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 27
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 113-Ա

ԼԵՎՈՆ ԱՐՄԵՆԻ ԱՂԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի նոյեմբերի 17-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի նոյեմբերի 17-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023BWMVFK), հողամասի սեփականատեր Լևոն Արմենի Աղեկյանի 2023 թվականի նոյեմբերի 21-ի N 5526 դիմումը. ***որոշում եմ***՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Անդրանիկի փողոցի 9 հասցեում գտնվող Լևոն Արմենի Աղեկյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0130-0025 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 16.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղը, 3,8 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 122,4 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան երկրորդ հարկը, 67,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան ձեղնահարկը, 39,6 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը և 3,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան նկուղի, երկրորդ հարկի, ձեղնահարկի և աստիճանի համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի և ավտոտնակի համար կազմում է 1389,6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 545 649,60 (հինգ հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր քառասունինը դրամ վաթսուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 28
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 114-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 642-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 20-ին տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-20122023-04-0153 որոշումը. ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 2-ի «Սյուզաննա Մարտիրոսի Կարօղլանյանի կողմից կատարած ինքնակամ շինությունների օրինականացման մասին» N 642-Ա որոշման մեջ կատարել լրացում և փոփոխություն՝
1) որոշման 1-ին կետում՝ «10,0 քառակուսի մետր մակերեսով պարիսպը,» բառերից հետո լրացնել «ինքնակամ բացված մեկ պատուհանը,» բառերով,
2) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան երկրորդ հարկի և բնակելի տան աստիճանահարթակի համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր թռչնանոցի, ծածկի, խորդանոցի և պարսպի համար կազմում է 1389,6 դրամ, յուրաքանչյուր ինքնակամ բացված պատուհանի համար՝ 2316 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 377 044,8 (երեք հարյուր յոթանասունյոթ հազար քառասունչորս դրամ ութանասուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՄԻՆԱՍՅԱՆ**

2024 թ. փետրվարի 28
գ. Փարաքար